ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱ «ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՖՈՒՏԲՈԼԻ ԳԱՎԱԹ 2024» ՖՈՒՏԲՈԼԻ ՄՐՑԱՇԱՐ

22.01.2024 18:33

Հարգելի՛ փաստաբաններ,

ՀՀ փաստաբանների պալատի մարզամշակութային ակումբը **2024 թվականի փետրվարի 3-ից** կազմակերպում է «**Փաստաբանների ֆուտբոլի գավաթ 2024**» ֆուտբոլային մրցաշար: Մրցակցության ձևաչափը, ինչպես նաև խաղերի անցկացման ժամանակացույցը կհստակեցվի թիմերի հայտագրումից հետո:

Մրցաշարին կարող են մասնակցել ՀՀ փաստաբանների պալատի և Արցախի փաստաբանների պալատի փաստաբանները, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի և ՀՀ փաստաբանական ակադեմիայի աշխատակազմերը, դասախոսական կազմը և ունկնդիրները: Մասնակցության հայտերն ընդունվում են թիմային կազմով, ինչպես նաև անհատապես:

Թիմերի ձևավորումից հետո նախատեսվում է ձևավորել ենթախմբեր: Ենթախմբերում 1-ին և 2-րդ տեղեր գրաված, ինչպես նաև, կախված թիմերի քանակից, լավագույն արդյունք ցույց տված 3-րդ տեղ գրաված թիմերը դուրս կգան եզրափակիչ փուլ:

Մասնակցության համար խնդրում ենք **մինչև սույն թվականի հունվարի 31-ը հայտագրվել** ՀՀ փաստաբանների պալատի էլեկտրոնային փոստի հասցեին՝ **(info@advocates.am)** հաղորդագրություն ուղարկելու եղանակով՝ նշելով Ձեր անունը, ազգանունը, արտոնագրի և հեռախոսի համարները (թիմի դեպքում թիմի անունը, մասնակիցների անունները, արտանագրերի համարները, թիմի պատասխանատուի տվյալները):

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })